

ՀՀ Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանի հարցազրույցը
«Միջազգային հարաբերություններ. Հայկական աշխարհ
ամսագրին»

Լոռին հայաստանյան զբոսաշրջության ամենագրավիչ անկյուններից մեկն է

-Պարոն Նալբանդյան, ներկայացրեք, խնդրեմ, Լոռու մարզի սոցիալ-տնտեսական վիճակն այսօրվա դրությամբ:

-Մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակը ներկայացնելիս նախ և առաջ պետք է հաշվի առնել մարզի յուրահատկությունները՝ աշխարհագրական դիրքը, բնակլիմայական պայմանները, մարզի 8 քաղաքային և 99 գյուղական համայնքներին բնորոշ առանձնահատկությունները: Մի խոսքով, յուրաքանչյուր գործոն վճռորոշ է մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակի բնութագրման առումով: Մարզի տարածքն ընդգրկում է 3799 քառակուսի կիլոմետր, ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը 12.8 տոկոս է, այն իր մեծությամբ երրորդն է հանրապետությունում: Մշտական բնակչության թվաքանակը 223.2 հազ.մարդ է, այդ թվում՝ քաղաքային՝ 131.9 հազ, գյուղական՝ 91.3 հազ.մարդ:

Մարզն իր բնույթով արդյունաբերական է, թեև մարզի սոցիալ-տնտեսական զարգացման առումով լուրջ ուշադրություն է դարձվում գյուղատնտեսությանը, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը, զբոսաշրջությանը և այլն:

Մարզում առավելապես զարգացած է հանքարդյունաբերությունը: Ընդհանուր առմամբ 2016 թվականին 2011թ. համեմատությամբ հանքագործական արդյունաբերության ծավալը ընթացիկ գներով աճել է շուրջ 9.3 անգամ, որը հիմնականում արդյունք է 2014թ. տարեվերջին «Թեղուտ» ՓԲԸ-ի շահագործման: Մարզում հանքարդյունաբերություն իրականացնող ընկերություններից են նաև «Սագամարը», «Էյ-Սի-Փի»-ն և այլն: Անցյալ տարի ծավալի աճ են ապահովել թեթև, մեքենաշինական, փայտամշակման արտադրությունները:

Առաջիկայում ևս մարզի համար՝ որպես կարևորագույն խնդիր, կմնա թեթև և սննդի արդյունաբերությունների հետագա զարգացումը, որոնք կարող են մեծ շուկա ունենալ ԵԱՏՄ և ԵՄ երկրներում: «Գլորիա», «Սարտոն» և «Բագում» ֆիրմաների արտադրանքը իր որակական ցուցանիշով մեծ պահանջարկ ունի ոչ միայն Ռուսաստանում, այլև Իտալիայում, Գերմանիայում և այլուր: Այսօր գյուղմթերքների վերամշակման և սննդի ոլորտում մարզում գործում են հարյուրից ավելի ձեռնարկություններ և անհատ ձեռնարկատերեր: Առաջիկա 10 տարում ևս սննդի արդյունաբերության ընդլայնումը և որակի բարձրացումը մարզի համար կմնա որպես գերակա ուղղություն, առաջին հերթին որպես գյուղմթերքների վերամշակման

(կաթ, միս, ցորեն, պտուղ-բանջարեղեն և այլն) բնագավառ, որը նաև հնարավորություն կտա մարզի արտադրության ընդհանուր ծավալում մեծացնելու փոքր և միջին բիզնեսի մասնաբաժինը մինչև 35-40%: Մարզի արդյունաբերության ոլորտում զգալի է նաև էլեկտրաէներգիայի արտադրության, ջրամատակարարման տեսակարար կշիռը: Եթե փորձենք ամբողջացնել ասվածը՝ այսպիսով՝ 2016թ. արդյունքներով մարզի արդյունաբերության տեսակարար կշիռը հանրապետության արդյունաբերության մեջ, ըստ ճյուղերի, ունի հետևյալ պատկերը՝ հանքագործական արդյունաբերություն՝ 26%, մշակող արդյունաբերություն՝ 5.7%, էլ.էներգիայի արտադրություն՝ 4.8% և ջրամատակարարում և այլ ճյուղեր՝ 5.2%:

Մարզում ծավալուն աշխատանքներ են իրականացվում պետական միջոցներով, բարերարների, միջազգային կառույցների աջակցությամբ: Լուրջ ներդրումներ են կատարվում հատկապես ճանապարհաշինության ոլորտում: Ուզում եմ մասնավորապես անդրադառնալ ամենախոշոր ծրագրին, որը կենսական ու ռազմավարական նշանակություն ունի ոչ միայն Լոռու մարզի, այլև ողջ հանրապետության համար: Խոսքս Վանաձոր-Բագրատաշեն-Վրաստանի սահման (Մ6) ճանապարհի շինարարության մասին է՝ 102 մլն եվրո (53 մլրդ դրամ) արժողությամբ: Մեծ ներդրումներ են իրականացվում նաև առողջապահության, կրթության, մշակույթի, հանրային կարևորության այլ բնագավառներում, ինչը վկայում է, որ մարզը գտնվում է պետական հոգածության ներքո:

Ինչ խոսք, կան նաև լուրջ խնդիրներ, որոնք փորձում ենք հաղթահարել քայլառքայլ, տքնաջան ու համառ աշխատանքի միջոցով:

Խոսելով մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին՝ չեմ կարող չանդրադառնալ 2017-2025թ.թ. մարզի զարգացման ռազմավարությանը: 2016թ.-ին մեկնարկեցին Լոռու մարզի 2017-2025թ.թ. տարածաշրջանային զարգացման ռազմավարության մշակման աշխատանքները: Այն մարզային մակարդակի ռազմավարական փաստաթուղթ է, որը ենթադրում է մարզում երկարաժամկետ զարգացման հեռանկարներ ու ուղղություններ՝ հիմնվելով առկա իրավիճակի, մարտահրավերների և հնարավորությունների վրա: Այն ձևավորվում է ազգային ռազմավարական շրջանակների հետ սերտորեն, և մասնակցային եղանակով ներգրավում է բոլոր շահագրգիռ կողմերին:

Յուրաքանչյուր մարզում 2017-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարության մշակումը Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման հայեցակարգի անմիջական պահանջն է: Դա կնպաստի հանրապետությունում աղքատության հաղթահարման ռազմավարությանը, գերակա նպատակ հռչակված տարածքային համաչափ զարգացման խնդիրներին, ինչպես նաև Լոռու մարզի համայնքների զարգացման ծրագրերում ներառված առաջնահերթ հիմնախնդիրների և մարտահրավերների արդյունավետ լուծմանը: Ծրագիրը կազմվել է մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծությամբ, մարզի ուժեղ և թույլ կողմերի վերհանմամբ, հնարավորությունների

գնահատմամբ, զարգացման հիմքում դրվող նպատակների սահմանմամբ, զարգացման գերակայությունների որոշմամբ, դրանց ըստ առաջնահերթությունների դասակարգմամբ, և իրականացվելիք ծրագրերի նախանշմամբ: Դրանք իրենց կոնկրետությամբ, չափելիությամբ, ռեսուրսահենքությամբ և իրագործվելիությամբ կապահովեն Լոռու մարզի զարգացումն այն նպատակադրմամբ, որ 2025 թվականին Լոռին ունենա բազմաճյուղ, զարգացած արդյունաբերություն, արդիականացված գյուղատնտեսություն, ՏՏ ոլորտ և զարգացած զբոսաշրջություն: Ծրագրի կազմման աշխատանքները համակարգվել են իմ կողմից: Այդ գործում իր զգալի ներդրումն են ունեցել նաև Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը, ինչպես նաև ԵՄ փորձագետները:

Համայնքերն իրենց հերթին նույնպես մշակել են զարգացման 5-ամյա ծրագրեր:

Լոռու մարզի տարածքային զարգացման ռազմավարության ֆինանսավորման հիմնական աղբյուրները կլինեն ՀՀ պետական բյուջեն, ֆինանսավորման այլընտրանքային միջոցները, մասնավոր ներդրումները, ինչպես նաև՝ համայնքների սեփական միջոցները:

-Պարոն մարզպետ, կիսնդեհինք անդրադառնալ մարզի միջազգային համագործակցությանը:

-Մարզում արտաքին կապերի ապահովումը և միջազգային համագործակցությունն, ըստ իս, իրականացվում է բարձր մակարդակով, ինչն էլ իր դրական արդյունքներն է տալիս միջազգային ներդրումների, բարեգործական մի շարք ծրագրերի իրականացման առումով:

Արտաքին կապերի և միջազգային համագործակցության շրջանակներում մարզում իրականացվել են խոշորածավալ աշխատանքներ, որոնք զգալի ներդրում են ունեցել մարզի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացում: Այսպիսով՝ շուրջ 43 միջազգային կառույցների հետ արդյունավետ համագործակցություն է: 2010թ.-ից Լոռու մարզը, միակը ՀՀ-ում, հանդիսանում է Եվրոպական Տարածաշրջանային Ասամբլեայի (ԵվՏԱ/ԱԵՐԲ), իսկ 2011թ.-ից՝ Ֆրանկոֆոն Ռեգիոնների Միջազգային Ասոցիացիայի (ԱԻԵՐ) լիիրավ անդամ: Շուրջ քսան տարի մարզը համագործակցում է Ֆրանսիայի Հանրապետության Պրովանս Ալպեր Լազուրի Ափ ռեգիոնի հետ: 2008թ.-ին երկու մարզերի միջև կնքվել է շրջանակային պայմանագիր, համաձայն որի 2012թ.-ից երեք տարին մեկ կնքվում են համագործակցության համաձայնագրեր Լոռու մարզում ներդրումներ իրականացնելու վերաբերյալ: Վերջին 6 տարիներին 500.000 եվրո արժողությամբ ծրագրեր են իրականացվել տուրիզմի, ագրոտուրիզմի, անասնաբուծության, առողջապահության բնագավառներում: ՊԱԿԱ-ի հետ նախատեսվում է ծրագրերի իրականացում նաև ՏՏ ոլորտում: Համագործակցության համաձայնագրեր են կնքվել Լոռու մարզի և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Շանսի, Շվեդիայի Ուփսալա նահանգների, Բելառուսի Հանրապետության Վիտեբսկի շրջանի, Վրաստանի Աջարիայի Ինքնավար Հանրապետության միջև:

-Ներկայացրեք, խնդրեմ, մարզի հոգևոր-մշակութային կյանքը:

-Հոգևոր-մշակութային կյանքը մարզում իր ուրույն տեղն ունի: Այն յուրաքանչյուր լոռեցու առօրյայի անբաժանելի մասն է կազմում: Ընդունված է ասել. Հայաստանը թանգարան է բաց երկնքի տակ, իսկ Լոռին այդ թանգարանի ամենաուշագրավ և հարուստ սրահներից մեկն է: Լոռու տարածքում մարդու մշակութային գործունեության հետքերը գալիս են վաղնջական ժամանակներից: Այդ մասին են վկայում դեռևս 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին Ախթալայի և Շամլուղի մերձակայքում՝ Ժակ Մորգանի, Սանահինում և Դսեղում՝ Ալ. Երիցյանի, Որնակում (այժմ՝ Ակներ)՝ Ն.Մառի, Հաղպատում, Պրիվոլնոյեում, Յաղդանում՝ Ե. Թաղայաշվիլու, Օձունում՝ Ս. Տեր-Ավետիսյանի և այլոց պեղումներով ի հայտ եկած մ.թ.ա երրորդից-առաջին հազարամյակներին վերաբերող մշակույթի արժեքավոր հուշարձանները, նաև հետագայում Դեբեդի ավազանի, Կիրովականի, Լոռի Բերդի, Քոսի Ճոթերի, Ղարաքոթուկի, Լորուտի և այլ հնավայրերի պեղումների արդյունքները:

Յուրաքանչյուր լոռեցի հպարտանում է իր մարզի գեղատեսիլ բնությամբ և հարուստ պատմամշակութային ժառանգությամբ: Լոռին համարվում է հայաստանյան **զբոսաշրջության ամենագրավիչ անկյուններից մեկը**: Լոռու հոգևոր-մշակութային բացառիկ արժեքներն ու լոռեցու հյուրընկալությունը, պարզությունն ու մաքրությունը յուրաքանչյուր տարի դեպի մարզ է կանչում հազարավոր զբոսաշրջիկների: Այստեղ են գտնվում 3000-ից ավելի կոթողներ, դրանց թվում ՅՈՒՆԵՍԿՈ-ի համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված Հաղպատ, Սանահին վանական համալիրները, Օձունի, Քոբայրի և Ախթալայի վանքերը, որոնք համայն մարդկության պատմամշակույթի արժեքավոր մաս են: Դրանք մեր մարզի այցեքարտն են:

Մարզում վերջին տարիներին ծավալուն և նկատելի աշխատանք է իրականացվել եկեղեցաշինության ասպարեզում: Կառուցվում են նոր եկեղեցիներ, վերականգնվում են պատմական մեծ արժեք ներկայացվող հնությունները:

Մարզպետարանը առավելապես սերտորեն է համագործակցում Հայ առաքելական եկեղեցու Գուգարաց թեմի հետ, իրականացվում են համատեղ ծրագրեր: Հայ Առաքելական եկեղեցու Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջյանի հետ պարբերաբար քննարկվել են հարցեր թեմին պատկանող «Ծիծեռնակ» ճամբարում արցախցի, սիրիահայ, սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ամառային հանգստի կազմակերպման, տարբեր բարեգործական ծրագրերի և այլնի մասին: Շուրջ հինգ տարի է, ինչ «Ձեռք մեկնիր եղբորդ» կարգախոսով ծրագիրը դարձել է Գուգարաց թեմի և մարզպետարանի ու տեղական ինքնակառավարման մարմինների համատեղ բարեգործական գործունեությունը: Դրա շրջանակներում, 2016 թ. ընթացքում ևս, օգնություն է ցույց տրվել ավելի քան 200 անապահով ընտանիքի:

Նախորդ տարի ապրիլյան քառօրյա պատերազմից հետո իմ և Գուգարաց թեմի առաջնորդի համանախագահությամբ ստեղծվեց մարզի համայնքների կողմից միջոցների հավաքագրումն ու հասցեական առաքումը կազմակերպող «Լոռի-Արցախ» հանձնախումբ,

որը համակարգում էր Արցախին և ապրիլյան մարտական գործողությունների մասնակիցներին սննդով, բուժական և այլ անհրաժեշտ պարագաներով օգնությունների հավաքագրումն ու առաքումը:

Մարզը առանձնանում է նաև մշակութային ակտիվ կյանքով: Մշտապես կազմակերպվում են մշակութային հետաքրքիր միջոցառումներ, որոնցից ուզում են առանձնացնել հատկապես «Թատերական Լոռի» ամենամյա փառատոնը: Այն արդեն մի քանի տարի է՝ միջազգային փառատոնի կարգավիճակ է ձեռք բերել: Արժանահիշատակ է նաև Ախթալայում նշվող «Խորովածի փառատոնը», «Օձունի գանձեր» մշակութային միջոցառումը, Թումանյանական օրերը ամենայն հայոց բանաստեղծի ծննդավայր Դսեղում և այլն, որոնք ևս մարզի ուրույն այցեքարտն են դարձել:

-Կինդրեի նաև անդրադառնալ մարզի համայնքներին, համայնքային կյանքին:

-Ինչպես արդեն նշեցի, մարզում առկա է 8 քաղաքային և 99 գյուղական համայնք: Լոռու մարզն առանձնահատուկ է մյուս մարզերից իր 6 խոշոր քաղաքներով՝ Վանաձոր, Ալավերդի, Սպիտակ, Ստեփանավան, Տաշիր, Թումանյան, ինչպես նաև փոքր երկու քաղաքներով Ախթալա և Շամլուղ: Համայնքներից յուրաքանչյուրն ունի զարգացման իր առանձնահատկությունը, տեմպերը, որոնք պայմանավորված են մի շարք գործոններով: Նրանցից յուրաքանչյուրն, ինչպես արդեն նշեցի, առաջնորդվում է համայնքների զարգացման 5-ամյա ծրագրերով: Մեր միջնորդությամբ, մարզի համայնքներում մեծածավալ ծրագրեր են իրականացվում պետական միջոցներով, միջազգային կառույցների աջակցությամբ, վարկային միջոցներով և այլն, որոնք միտված են բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, համայնքային կյանքի ակտիվացմանը: Համայնքների մեծ մասում մշակութային, սպորտային ավանդական դարձած միջոցառումներ են իրականացվում, որոնք ևս ակտիվացնում են համայնքային կյանքը:

-Պատմեք, խնդրեմ, սփյուռքի հետ կապերի ու համագործակցության մասին:

-Հայկական սփյուռքի հետ համագործակցությունը ևս մեր մշտական ուշադրության կենտրոնում է: Ուզում են առանձնացնել համագործակցությունը միջազգային հիմնադրամների հետ, որոնք լուրջ ներդրումներ են իրականացրել Լոռու մարզում:

Ավելի քան 10 տարի է, բազմաթիվ այլ կազմակերպություններ իրենց առաքելությունն են իրականացնում մեր մարզում՝ «Առաքելություն Հայաստան», «Երուսաղեմի բժշկական Սուրբ Ղազարի Օրդենը Հայաստանում», «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ները , «Հովարդ Կարագյոզյան» բարեգործական ատամնաբուժական և ակնաբուժական կենտրոնը, «Հույս Հայաստանին» և «Ֆրանսահայ միության» մանկական բժշկական կենտրոնները առողջապահական ծառայություններ են մատուցում մարզի մանկական ազգաբնակչությանը: Վանաձոր համայնքում «Ֆուլեր տնաշինական կենտրոն» բարեգործական հասարակական կազմակերպության և «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի համատեղ ներդրմամբ արդեն մի քանի տարի է՝ կառուցվում են բնակարաններ, որոնք բաշխվում են ոչ աղետի

հետևանքով անօթևան մնացած և փաստացի տնակային ավաններում բնակվող ընտանիքներին:

2017թ.-ի ընթացքում նախատեսվում է սերտացնել համագործակցությունը Վանաձորի քույր քաղաքների՝ Բաթումի, Փասադենայի, Պոդոլսկի և Կիսլովոդսկի հայկական համայնքների հետ, կազմակերպել փոխադարձ այցելություններ, ամրապնդել հայրենիք-սփյուռք կապերը: Սփյուռքի՝ մասնավորապես քույր քաղաքների հայ համայնքներին նախատեսվում է ապահովել հայալեզու գրականությամբ: Լոռին մշտապես սիրով է հյուրընկալում ՀՀ սփյուռքի նախարարության կողմից իրականացվող «Արի տուն» ծրագրով Հայաստան այցելող սփյուռքահայ երիտասարդներին:

Մեր նախաձեռնողականությունը սփյուռքի հետ համագործակցելու առումով, իհարկե, շարունակական բնույթ է կրելու:

-Ինչպիսին է մարզում գործարար միջավայրը:

- Փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև **գործարար հատվածի** զարգացումը մարզում աղքատության կրճատման և տնտեսական զարգացման ամենակարևոր ուղղություններից մեկն է: Թեև այսօր մարզի տնտեսության մեջ առյուծի բաժինը խոշոր ձեռնարկություններին է բաժին ընկնում, այս մասին արդեն խոսեցինք, սակայն լուրջ ուշադրություն է դարձվում փոքր և միջին ձեռներեցությանը, որն ընդամենը մարզի տնտեսության 24 տոկոսն է կազմում: Մարզի զարգացման 2017-2025թթ. ռազմավարության մշակմանը զուգընթաց մարզի զարգացման հեռանկար և գերակայություն սահմանվեց տնտեսական աճի ապահովման համար տնտեսության վարման ինտենսիվ մեթոդների կիրառումը, նոր աշխատատեղերի ստեղծումը, գործարար ակտիվության բարձրացումը: Որպես արդյունք՝ նախատեսել ենք մինչև 2025թ.-ը 12-ով ավելացնել ակտիվ ձեռնարկությունների թիվը: Կարծում եմ, դա մեզ կհաջողվի: 2016թ.-ին մշակվել են շուրջ 14 ներդրումային բիզնես- ծրագրեր (գործող և սկսնակ ձեռներեցների համար), որոնցից 3-ը արժանացել են ՀՀ կառավարության հավանությանը: Այս ուղղությամբ բազմաթիվ ծրագրեր են իրականացվել նաև միջազգային համագործակցության շրջանակներում: Միայն ԵՄ ֆինանսական աջակցության ծրագրերով շուրջ 51 սկսնակ երիտասարդների և կին ձեռներեցների տրամադրվել են դրամաշնորհներ՝ բիզնես գաղափարները կյանքի կոչելու համար: Վանաձորում արդեն ավելի քան 10 տարի գործում է Էկոնոմիկայի նախարարության Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի Լոռու մասնաճյուղը, որը մարզպետարանի հետ համագործակցությամբ ակտիվ աշխատանք է տանում փոքր և միջին գործարարության զարգացման ուղղությամբ:

-Ինչ կասեք, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ուղղությամբ կատարվող աշխատանքների, «Սմարթ մարզ» գաղափարի մասին:

- Մեր նպատակն է զարգացնել SS ոլորտը Լոռու մարզում, ինչը մեր մարզի տնտեսության զարգացման գլխավոր անկյունաքարերից մեկը կարող է դառնալ, իսկ դրա համար Լոռիում առկա են բոլոր հնարավորությունները: Նախատեսում ենք 2025թ.-ի դրությամբ նորագույն տեխնոլոգիաների ոլորտի մասնագետների թիվը մարզում ավելացնել 20 տոկոսով:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ոլորտում՝ որպես հաջողված արդյունք, կարելի է նշել ՀՀ կառավարության նախաձեռնությամբ, Համաշխարհային բանկի շուրջ 6 մլն դոլար ֆինանսական աջակցությամբ 2014թ.-ին Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի (ՎՏԿ) հիմնումը, որի պաշտոնական բացումը տեղի ունեցավ 2016թ.-ի աշնանը ՀՀ Նախագահի անմիջական մասնակցությամբ: Ծրագիրն ուղղված է նպաստելու Լոռու մարզի Վանաձոր քաղաքում ժամանակակից գիտելիքահենք և ինովացիոն ենթակառուցվածքներով հագեցած տեխնոլոգիական կենտրոնի ստեղծմանը, օտարերկրյա ներդրումների ներգրավմանը, որակյալ տեխնոլոգիական մասնագետների պատրաստմանն ու վերապատրաստմանը, ինչպես նաև մարզի սկսնակ ընկերություններին և անհատ ձեռնարկատերերին բիզնես աջակցության ու խորհրդատվության տրամադրմանը: Այժմ կենտրոնում գործում են տեղեկատվական տեխնոլոգիաների և ճարտարագիտական ոլորտների ուսումնական լաբորատորիաներ, համատեղ աշխատանքային տարածք՝ սկսնակ թիմերի համար: 2015թ.-ից «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի (COAF) կողմից իրականացվում են «Սմարթ կենտրոնի» ստեղծման աշխատանքներ հանրապետական մայրուղուց ոչ այնքան հեռու՝ գեղատեսիլ Դեբեդի հովտում: Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտին հասցնել 2017թ. աշնանը: Այս կենտրոնն իր տեսակի մեջ առաջինն է հանրապետությունում: Այն նոր հնարավորություններ կստեղծի մարզի գյուղական միջհամայնքային կապի ամրապնդման, փորձի փոխանակման, դպրոցականների կրթությունը նորարարական տեխնոլոգիաներով կազմակերպելու համար: Հիմնադրամի կողմից մարզի 6 համայնքներում ստեղծվել են ստեղծագործարաններ:

2017թ.-ին մարզը հայտարարել ենք «Սմարթ» մարզ և այս կերպ դառնալու ենք օրինակելի ողջ հանրապետությունում: Այս նախաձեռնության մեկնարկը տրվեց մարզի տարբեր համայնքների 13 հանրակրթական դպրոցներում «Սմարթ» դասասենյակների ստեղծմամբ: Մինչև տարեվերջ կներգրավվեն ևս 10 դպրոցներ, ինչպես նաև մարզի քոլեջները: ՀՀ Նախագահի գործուն աջակցությամբ նախատեսվում է «Թումո» կենտրոնի հիմնում Վանաձորում, հողհատկացման աշխատանքներն ընթացքի մեջ են: Նշածս յուրաքանչյուր նախաձեռնություն մեկ ամբողջական շրջայի մեկ օղակն է կազմում: Ես համոզված եմ, որ կարճ ժամանակ անց մենք կկարողանանք հյուսել այդ շրջան՝ մարզը դարձնելով SS կենտրոն, այդ կերպ նաև օրինակելի ողջ հանրապետությունում:

-Ինչպիսին են տուրիզմի զարգացման հեռանկարները մարզում:

-Ինչպես արդեն նշեցի, Լոռին առանձնահատուկ է իր գեղատեսիլ բնությամբ և հարուստ պատմամշակութային ժառանգությամբ՝ հանդիսանալով հայաստանյան

զբոսաշրջության ամենագրավիչ անկյուններից մեկը: Այստեղ են գտնվում 3000-ից ավելի կոթողներ:

Մարզում գործում է հյուրանոցային տնտեսության 67 օբյեկտ: Վերջին հինգ տարիներին հյուրանոցային տնտեսությունների թիվը արագորեն աճում է, հատկապես՝ գյուղական համայնքներում: Դրան զուգահեռ աճում է զբոսաշրջիկների թիվը. տարեկան շուրջ 40.000 զբոսաշրջիկ է այցելում մեր մարզ: Վերջին տարիներին ոլորտի զարգացման ուղղությամբ թե՛ պետական և թե՛ միջազգային համագործակցության շրջանակներում բազմաթիվ ծրագրեր են իրականացվում՝ ենթակառուցվածքների զարգացման, ծառայությունների որակի բարձրացման, մասնագետների վերապատրաստման միջոցով: Ավանդական փառատոների և ցուցահանդեսների կազմակերպումը ևս նպաստում են զբոսաշրջիկների թվի ավելացմանը: Մեր նախաձեռնությամբ և մարզի յոթ համայնքների (Ալավերդի, Թումանյան, Ախթալա, Օձուն, Դսեղ, Հաղպատ, Արդվի) մասնակցությամբ ստեղծվել է Լոռու տուրիզմի զարգացման հիմնադրամ, որի նպատակը ոլորտի զարգացման ծրագրերի իրականացումն է: Լոռի-Ֆրանսիայի Պրովանս Ալպեր Լազուրի Ափ ռեգիոնի հետ համագործակցության շրջանակներում Ալավերդի քաղաքում ստեղծվել է «Թումանյան աշխարհ» զբոսաշրջության կենտրոնը, տպագրվել են քառալեզու բուկլետներ, գործում է կենտրոնի քառալեզու ինտերնետային կայքը: Ֆրանսիական գործընկեր կազմակերպությունների հետ համատեղ մարզում իրականացվել են զբոսաշրջության զարգացման հնարավորությունների բացահայտման ուսումնասիրություններ և գնահատում, այդ թվում՝ ռաֆտինգի, էկոտուրիզմի, ագրոտուրիզմի, արդյունաբերական և մշակութային տուրիզմի ուղղությամբ: Մշակվել են քայքային երթուղիներ Ստեփանավան-Թումանյան տարածաշրջանների միջև: ԵՄ աջակցությամբ Արևելյան գործընկերության Հայաստան-Վրաստան ծրագրերի շրջանակներում անցյալ տարի իրականացվեց հեծանվային զբոսաշրջության երթուղիների մշակման ծրագիր:

Այսուհանդերձ ևս մեկ անգամ ուզում եմ շեշտել, որ մարզում զբոսաշրջության զարգացման կարևորագույն գրավականը հյուրընկալ և հյուրասեր լոռեցիներն են: